

ԿՐՕՆԱԿԱՆ

ՏՕՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

«Յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք՝ զի ես յաղթեցի աշխարհի»:

«Այս աշխարհի մէջ նեղութիւններ պիտի ունենաք, սակայն քաջալերուեցէ՛ք՝ որովհետեւ ես յաղթեցի աշխարհին»:

(Յովհ. ԺԶ:33)

Սուրբ Գրային աւանդութիւնը, Կղեմէս Հայրապետի բերնով կը նկարագրէ դէպք մը, ուր այս Սրբազան Հաստատութեան Մեծ Սուրբը՝ Յակոբոս Զեբեդեան Առաքեալ, Սանհետրինի մէջ իր դատի ընթացքին այնքան պերճախօս կերպով կը ջատագովէ Քրիստոսի վարդապետութիւնը, որ զինք բանտէն դատարան առաջնորդող պահակը զգացուած Սուրբին յայտնած գաղափարներու վսեմութենէն, տեղւոյն վրայ կը խոստովանի թէ ինք եւս կ'ողջեր աշակերտիլ Քրիստոսի: Ու մինչ երկու մահապարտները կ'առաջնորդուէին կառափնարան, պահակը կրկին անգամ ներողութիւն կը խնդրէ Առաքեալէն, որուն վրայ կը շարունակէ աւանդութիւնը, Մեծ Սուրբը քաղցրօրէն կը նայի անոր ու կ'ըսէ. «Խաղաղութիւն ընդ քեզ» ու կ'ողջագուրուի նորադարձին հետ և երկուքն ալ իրենց արեան գինով կը վճարեն այսպէս կոշուած իրենց աներեր հաւատքին համար:

Անտարակոյս, հագուագիւտ երեւոյթ է ակնկալել մահուան սեմին կանգնած մահապարտէ մը, հոգիի այսքան վեհութիւն, որ արհամարհելով իր մօտ կանգնած մահուան հրեշտակը՝ դահիճը, առանց դոյզն երկմտանքի, մի քանի խօսքերով կը յաջողի խաղաղեցնել տագնապահար հոգին նորադարձի մը, անոր սրտին մէջ վառելով լոյսը յոյսին, անոր տալով սրտի ու մտքի անդորրութիւն և հաւատքը՝ աւելի վեհ կեանքի մը կարելիութեան: Գիտէ՞ք թէ ի՞նչ անսահման արիւթիւն, գերազանց ոյժ և շնորհք կ'ենթադրէ նահատակին համար դէմ-յանդիման գալ իր թշնամիներուն ու շեշտակի նայելով անոնց աչքերուն ըսել. «Ձեր շղթաներն ու սպառնալիքները զիս չեն վախցներ. ես կը հաւատամ միայն ճշմարիտ Աստուծոյ», որովհետեւ նահատակուիլ կամ յօժար ու պատրաստ ըլլալ նահատակութեան՝ համոզումի, հաւատարմութեան բայց մանաւանդ՝ սիրոյ հարց է: Ներոն Կայսր գիշերները իր պարտէզին մէջ տեղի ունեցող խրախճանքները լուսաւորելու համար քրիստոնեաները կը կապէր ձողերու և կը վառէր զիրենք: Այդ սուրբերուն համար պատիւ էր զոհուիլ գերագոյն ու բարձր նպատակի մը համար, անոնք քաջ գիտէին թէ նեղութիւններ պիտի ունենային այս աշխարհի վրայ, սակայն իրենց ականջներուն մէջ անդադար կը հնչէր իրենց Փրկչին խօսքը. «Քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին», հետեւաբար իրենք եւս պիտի յաղթէին այս աշխարհին:

Բայց ո՞վ է նահատակը: «Մարտիրոս» բառը, որ Յունարէն է, ինքնին կը նշանակէ «Վկայող», սակայն Քրիստոնէական ճշգրիտ մեկնաբանութեամբ կը նշանակէ մէկը՝ որ իր հաւատքին համար կը վճարէ իր կեանքի գինով: Սակայն անոնք՝ որոնք վկաները հանդիսացած են Քրիստոսի, առանց մահուան ենթարկուելու, կոշուած են «խոստովանողներ»:

Եւ ի՞նչ պիտի ըլլար հետեւանքը եթէ այսօրուան Մեծ Սուրբը իր կեանքը փրկելու համար ուրացած ըլլար իր հաւատքը, այդ պարագային ոչ ոք ի վիճակի պիտի ըլլար գուշակելու հետեւանքները այդ ուրացումին: Մարդկային չափանիշերով, թերեւս Աւետարանը միանգամ ընդմիշտ անհետանար, Եկեղեցին կորսուէր, և աշխարհ անտեղեակ մնար Սուրբին մահէն: Մենք միշտ երախտապարտութեան զգացում մը կ'ունենանք հանդէպ անոնց՝ որոնք մեզի շնորհք մը, բարիք մը գործած են, քան թէ անոնց՝ որոնք թերեւս մեզի ձեռով մը օգտակար կրնային ըլլալ: Մեր սէրն ու հաւատարմութիւնը կ'երթայ աւելի անոնց՝ որոնք անասելի տառապանքներու և ապա մահուան ենթարկուեցան որպէսզի աշխարհն ու մարդկութիւնը գերազանցապէս օգտուէր Աւետարանի լոյսէն: Ու այս իրողութիւնը այսօրուան հաւատացեալը կը յանգեցնէ այն միակ ու բացարձակ ճշմարտութեան, որ Հին Եկեղեցւոյ նահատակները գերագոյն հաւատքի տէր մարդիկ էին, աւելի գերազանց քան 21-րդ դարու հաւատացեալը:

Աստուածորդին իր առաքեալներուն ըսաւ թէ աշխարհ զիրենք պիտի ատէր իրեն հաւատալնուն համար, և այսօրուան մեր տօնախմբութեան զոյգ սուրբերը Յակոբոս Գլխադիր Առաքեալ և Յովհաննէս Աւետարանիչ արժանացան այդ ատելութեան: Աշխարհին ու աշխարհիկին ատելութիւնը սարսափելիօրէն տգեղ են և մարդկային տառապանքն ու մահը անշուշտ վանողական, սակայն Գլխադիր Առաքեալի մահը անօրինակ գեղեցկացուց զինք, որովհետեւ ան սիրով զնաց միանալու Սիրոյ Վարդապետին: Ան քանիցս թելադրուած էր քահանայապետներէն դադրեցնելու իր քարոզութիւնները յանուն Յիսուսի, բայց տեղի չտուաւ ու շարունակեց: Գլխադիր Սուրբին և իր ճակատագրակիցներուն կեանքը ամենօրեայ հալածանք մըն էր, տառապանք ու դատաստան, բան մը որ այս դարուս Եւրոպայի կամ Նոր Աշխարհի խաղաղ պայմաններուն մէջ ապրող քրիստոնեային համար հազիւ ըմբռնելի ըլլայ: Քրիստոս՝ Պետրոս Առաքեալի բերնով զգուշացուցած էր առաքեալները ըսելով. «Ահա Սատանան կ'ուզէ ձեզ մաղել ցոռէնի մման, սակայն ես կ'աղօթեմ ձեզի համար, որ ձեռ հաւատքը չպակսի» (Ղուկ. ԻԲ:31): Եւ արդէն ի՞նչ է մաղելու գործողութիւնը եթէ ոչ անվերջ շարժել, խառնշտկել, ճիշդ ան ինչ որ կը գործադրուէր առաքեալներուն և հաւատացեալներուն վրայ: Երեւակայեցէ՛ք թէ ի՞նչ սրտմաշուք օրեր և ժամեր անցուցած պէտք է ըլլային Առաջին Եկեղեցւոյ հաւատացեալները, ամէն վայրկեան ձերբակալութիւն և ապա մահ ահնկալելով, իսկ անդին՝ հրեաներու կողմէն զՔրիստոս ուրանալու անվերջ սպառնալիքները: Ահա մաղելու այս գործողութեան մասին էր որ կ'ականարկէր մեր Փրկիչը, որուն զոհ կ'երթային թուամորթները, մինչ գաղափարականի տէր քրիստոնեան աներեր կը մնար իր հաւատքին վրայ, պատրաստ նահատակութեան: Մարտիրոսանալ՝ կը նշանակէ զգալ թէ փոթորիկը կը մօտենայ, սակայն Քրիստոսի սիրոյն դիմագրաւել այդ փոթորիկն ու տոկալ անոր չար հետեւանքներուն՝ այդ էր էականը:

Նոյնիսկ հասարակ ոճրագործներ իրենց մահուան դատապարտութեան ժամանակ երբեմն կ'արժանանան անցորդի մը կամ ներկայի մը գովին, սակայն քրիստոնեայ նահատակը միշտ կ'ենթարկուէր դիտողներու ամօթանքին և քամահրանքին, ան չունէր խղճացող բարեկամներ կամ ընկերներ, այդ քրիստոնեայ հաւատացեալին միակ Մխիթարիչը՝ իր արեան մկրտութեան պահուն՝ անոր աներեւոյթ Աստուածն էր, ու ասոր մէջ կը կայանայ այդ նահատակներու հոյլին մեծութիւնն ու փառքը, և առաքեալներու խումբէն այս Սրբազան Հաստատութեան Մեծ Սուրբն էր, որ կ'արժանանար այս խումբին առաջին նահատակը ըլլալու պատիւին:

Այս Սրբազան Հաստատութեան գլխաւոր Սուրբը՝ Յակոբոս Առաքեալ, որուն կեանքը թէեւ կարճ եղաւ, բայց ոչ աննշան. ան եթէ մեզի շնորհուց որեւէ ձեւի գրական ժառանգ, բայց մեզի թողուց իր հոգիին լոյսը՝ որուն լոյսովը ցայսօր առաջնորդուած

են ու տակաւին պիտի առաջնորդուին նոր սերունդները Առաքելական այս Աթոռին:

Անցած են քսան դարեր և ներկայ ժամանակները, փառք Ամենակալին, չեն պահանջեր արեան զոհեր և մարտիրոսներ: Սակայն այս Ս. Աթոռին հարազատ զաւակ կ'ըլլայ միայն ան՝ որ գիտէ իր հոգիին, մտքին ու մարմնին ամբողջ զօրութեամբը դառնալ անարիւն պատարագ, որուն մտածման ամենայեւորին նշոյլն անգամ զուրկ ըլլայ Հնչաքաղցութենէ, Մամոնային և Ես-ին սէրերէն: Այս Աթոռին միաբանը իր հոգւոյն և մտքին մէջ, իր ամբողջ էութեամբ պարտի բարձր պահել շահերը այս Սրբազան Հաստատութեան և ոչ թէ իր սոնքացող Ես-ին:

Մահը՝ սիրելի եղբայրներ սուրբ է, երբ սուրբ իտէալի մը համար է կատարուած: Սրբազան Սաղմոսասացը կ'ըսէ. «Պատուական է առաջի Տեառն՝ մահ սրբոց իւրոց». այսինքն մահը անոնց՝ որոնք նախ սրբութեամբ ապրած են, այսինքն նեղութեամբ, անձուկ և տառապագին պայմաններու մէջ, և ապա արժանացած նահատակի և սուրբի մահուան:

Կեանքն ու պատմութիւնը մեզի ցոյց տուած են թէ կարգ մը մարդիկ օժտուած են որոշ ներհայեցողութեամբ կամ ներքին ճառագայթումով մը: Ասոնք այն անձերն են, որոնք ինքզինքնին գիտցած են բանալ իրենց շրջապատին և Աստուծոյ միանգամայն: Այսինքն, այս անհատները ի վիճակի եղած են ճշմարտութեան լոյսն ու Աստուծային զօրութիւնը բաշխելու մարդկութեան, և ահա ճիշդ այդ խումբին կը պատկանէին Սրբոց Յակոբեանց Միաբանութեան հիմնադիրներ՝ Տեառնեղբայր և Գլխադիր զոյգ առաքեալները, որոնք եղան, են ու պիտի մնան տեսիլքը, յայտնութիւնն ու ոգին այս հաստատութեան: Թող անոնց աչքը միշտ քաղցր մնայ մեր վրայ և թող միշտ արժանի ըլլանք անոնց սրբաբոյր օրհնութեան:

Մենք պարտինք նոյնութեամբ որդեգրել այն հաւատքը, որ այս Աթոռի Մեծ Սուրբին էր, ինչպէս նաեւ առաքեալներունը, որպէսզի կարենանք դառնալ և մնալ մշակներ առանց ամօթի, հաւատքով և նուիրուածութեամբ սպասաւորելու մեր Փրկչի Լոյս Աւետարանին, ի փառս Ամենասուրբ Երրորդութեան. Ամէն:

Ն.Ա.Մ.

